# Բողոքարկման և գանգատների ներկայացման ձև

Blue Shield Medicare Advantage պլանի և Blue Shield Medicare-ի Դեղատոմսով բաց թողնվող դեղերի պլանի անդամների համար: Բողոքարկման և/կամ գանգատի ներկայացման հայց (թե ինչ են նշանակում «գանգատ» և «բողոքարկում» հասկացությունները, տե՛ս թերթիկի դարձերեսը)

| | |
|---|---|
| **Անդամի անունը՝** | **Անդամի ID համար՝** |
| **Հասցե՝** | |
| **Հեռախոսահամար՝** | **Լիազոր ներկայացուցիչ՝** |

## ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

| | |
|---|---|
| **Մերժված ծառայության կամ պահանջի համարը(ները), որ ցանկանում եք բողոքարկել** | |
| **Ծառայության(ծառայությունների) մատուցման ամսաթիվը՝** | **Բուժծառայություն մատուցողի անունը՝** |
| **Վեճի առարկա ընդհանուր գումարի չափը՝** $ | **Անդամի կողմից վճարվող գումարի չափը (եթե կիրառելի է)՝** $ |

Ձեր բողոքարկման հայցը ներկայացրեք պարզ, ընթեռնելի ձևով, հնարավորինս մանրամասն: Կարող եք տրամադրել ցանկացած տեղեկատվություն, որը ձեր կարծիքով կարող է օգտակար լինել, այդ թվում՝ պահանջների/հաշիվների օրինակներ, բժշկական արձանագրություններ կամ մերժման ծանուցումներ, եթե այդպիսիք կան. ______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

**Ստանդարտ բողոքարկման (որոշման վերանայման) հայցը պետք է գրավոր ներկայացվի մերժման վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո 60 օրվա ընթացքում:** Զանգահարելով Հաճախորդների սպասարկման ծառայություն՝ ձեզ կառաջարկվի ներկայացնել ստանդարտ բողոքարկում, սակայն դրան չի կարող ընթացք տրվել՝ առանց ձեր գրավոր հայցադիմումի:

## ԳԱՆԳԱՏ

Ներկայացրեք ձեր գանգատը կամ խնդիրը. ______________________________

______________________________

______________________________

**Գանգատը կարող է ներկայացվել բանավոր կամ գրավոր՝ դեպքից հետո 60 օրվա ընթացքում:** Նկատի ունեցեք, որ բողոք ներկայացնելու համար կարող եք կապ հաստատել մեր Հաճախորդների սպասարկման բաժնի հետ՝ Blue Shield-ի անդամի նույնականացման քարտում նշված հեռախոսահամարով:

Ստորագրություն՝ ______________________________ Ամսաթիվ՝ ______________________________

**Անդամի (կամ ներկայացուցչի) ստորագրությունը** (եթե ներկայացուցիչ եք, լրացրեք կից Ներկայացուցչի նշանակման (AOR) ձևը)

Ներկայացրեք այս ձևը Blue Shield of California Medicare-ի Բողոքարկման և գանգատների ներկայացման բաժին՝

| | |
|---|---|
| Ձևը կարող եք ուղարկել փոստով՝<br>P.O. Box 927<br>Woodland Hills, CA 91365-9856<br>**կամ ֆաքսով՝** (916) 350-6510 | Անձամբ՝<br>6300 Canoga Ave.<br>Woodland Hills, CA 91367 |

A54324MAD-AM_0124 Y0118_24_129B_C 02292024
A54324DSN-AM_0124 H2819_24_129B_C Accepted 03182024

# Ի՞նչ է գանգատը

Բողոքի տեսակ, որն ուղղված է մեր կամ մեր ցանցի բուժծառայություն մատուցողներից կամ դեղատներից մեկի դեմ, ինչպես նաև խնամքի որակի հետ կապված բողոք: Այս տեսակի բողոքը չի ներառում փոխհատուցման կամ վճարման հետ կապված վեճեր:

# Ի՞նչ է կազմակերպության որոշումը

Կազմակերպության որոշումը Blue Shield 65 Plus-ի կամ պլանի անունից հանդես եկող անձի (օրինակ՝ ձեր անձնական բժշկի կամ բժիշկների խմբի) կողմից արված նախնական որոշումն է՝ հաստատելու կամ մերժելու ծառայության դիմաց վճարման կամ ծառայության տրամադրման վերաբերյալ հայցը, որը ներկայացվել է ձեր կամ ձեր անունից հանդես եկող անձի կողմից:

# Ի՞նչ է փոխհատուցման վերաբերյալ որոշումը

Որոշում այն մասին՝ արդյոք բուժծառայությունը կամ ձեզ նշանակված դեղը պետք է փոխհատուցվի պլանով, և թե ինչ գումար (եթե կիրառելի է) պետք է վճարեք ծառայության կամ դեղատոմսով բաց թողնվող դեղի համար: Սովորաբար, եթե ձեզ նշանակված դեղատոմսը ներկայացնում եք դեղատուն, և դեղատանը ձեզ հաղորդում են, որ դեղատոմսում նշված դեղը չի փոխհատուցվում ձեր պլանով, դա փոխհատուցման վերաբերյալ որոշում չէ: Եթե դուք համաձայն չեք սրան, պետք է զանգահարեք կամ գրեք ձեր պլանին՝ պահանջելու համար պաշտոնական որոշում կայացնել փոխհատուցման վերաբերյալ:

# Ի՞նչ է բողոքարկումը

Բողոքարկումն այն գործողությունն է, որը դուք ձեռնարկում եք, երբ համաձայն չեք լինում բուժծառայությունների կամ դեղատոմսով բաց թողնվող դեղերի փոխհատուցման, ծառայությունների կամ արդեն ստացած դեղերի վճարման վերաբերյալ ձեր հայցը մերժելու որոշման հետ: Դուք կարող եք բողոքարկել, եթե համաձայն չեք ձեզ տրամադրվող ծառայությունները դադարեցնելու որոշման հետ: Օրինակ՝ դուք կարող եք բողոքարկել, եթե ձեր պլանը չի վճարում դեղի, ապրանքի կամ ծառայության համար, որը ձեր կարծիքով դուք կարող եք ստանալ:

Եթե մենք մերժենք բուժխնամքի կամ ծառայության վճարման հետ կապված ձեր հայցի որևէ կետ, դուք կարող եք պահանջել մեզնից վերանայել մեր որոշումը: Սա կոչվում է «Բողոքարկում» կամ «Որոշման վերանայման հայց»:

Դուք կարող եք նաև պահանջել մեր որոշման վերանայում, եթե մենք մերժենք D բաժնի դեղատոմսով բաց թողնվող դեղ(եր) ստանալու վերաբերյալ ձեր հայցի որևէ կետ մեր փոխհատուցման որոշման մեջ: Սա կոչվում է «Որոշման վերանայման հայց»:

Գանգատ և/կամ բողոքարկում ներկայացնելու վերաբերյալ ամբողջական տեղեկատվության համար տե՛ս *Ապահովագիրը:*

Blue Shield of California is an independent member of the Blue Shield Association.